

Եվրոպական Բանկային Ֆեդերացիայի անդամ-երկրներում բանկային հանցագործությունները 2007 թ-ին

Գողությունների խնդիրը շարունակում է մնալ բոլոր ժամանակների հիմնահարցերից մեկը, որը կգոյատևի այնքան ժամանակ, որքան գոյություն կունենա դրանը:

Համաձայն վիճակագրական տվյալների՝ հանցագործությունները պայմանավորված են տվյալ երկրի կամ հարևան երկրների տնտեսությունների վիճակով:

2008 թ. մայիսի 30-ին Կիպրոսում կայացավ Ֆիզիկական Անվտանգության ծառայության աշխատախմբի տարեկան հանդիպումը, որի ընթացքում ուշադրությունը սևեռված էր բանկերում տեղի ունեցող գողություններին: Հանդիպման ընթացքում, հիմք ընդունելով 2007 թ. վիճակագրական և պրակտիկ տեղեկատվությունները, կատարվեցին որոշ վերլուծություններ՝ կապված ֆինանսական կառույցներում տեղի ունեցող հանցավոր գործունեությունների հետ: Մանրամասնորեն քննարկվեցին բանկերի մասնաճյուղերի, բանկոմատների և ինկասատորների վրա իրականացված հարձակումների հետ կապված հարցերը:

Քննարկումների շրջանակներում աշխատանքային խումբը փորձեց առանձնացնել բանկերում անվտանգության համակարգերի, ինչպես նաև զարգացման նոր ծրագրերի և պայքարի մեթոդների կիրառման ընդհանուր միտումները: Նման տեղեկատվության փոխանակման նպատակն էր ռիսկերի գնահատման արդյունավետության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև առավել արդյունավետ և համապատասխան անվտանգության համակարգերի մշակումը:

2007 թ. նկատվում է կողոպուտների թվի նվազում: Չնայած դրանց հետևանքով հասցված վնասների ծավալը նվազել է, այնուամենայնիվ հանցագործությունների թիվը շարունակում է բարձր մնալ:

Ըստ վիճակագրության՝ բռնությունը առկա է բոլոր երկրներում: Բռնության դիմում են թե՛ «պրոֆեսիոնալները», թե՛ «ոչ պրոֆեսիոնալները»: 2007 թ-ին «ոչ պրոֆեսիոնալ» հանցագործությունների թիվը գերիշխող դիրքում էր: «Պրոֆեսիոնալ» հանցագործությունների դեպքում բանկի աշխատողներն երկար ժամանակ ենթարկվում են ահաբեկչության, ֆիզիկական և հոգեբանական ճնշում է գործադրվում և՛ աշխատակիցների, և՛ հաճախորդների վրա:

Բանկերում փոխվում է նաև աշխատառճը, քանի որ ղեկավարությունը փորձում է իր աշխատակիցներին հնարավորինս զերծ պահել դրամի հետ անմիջական շփումից:

Հանցագործությունների թիվը

2007 թ-ին իրականացվել են 5550 բանկային հանցագործություններ (2006 թ. հետ համեմատ՝ այս ցուցանիշն աճել է 3%-ով): Տարբեր երկրներում նկատվում են հանցագործությունների թվի փոփոխման տարբեր միտումներ: Որոշ երկրներում նկատվել է բարձր աճ (օր.՝ Չեխիայում +49%, Կիպրոսում +50%), մյուսներում հանցագործությունների քանակը նվազում կամ կայունանում է (մասնավորապես՝ Իռլանդիայում, Ռումինիայում և Շվեյցարիայում): Գերմանիայում, Իտալիայում և Իսպանիայում, ինչպես 2006 թ-ին, այնպես էլ 2007 թ-ին գրանցվել է հանցավորության ամենաբարձր ցուցանիշը:

2006 թ. հետ համեմատ՝ 2007 թ-ին չհաջողված հարձակումների քանակը (15%) մնացել է անփոփոխ: Հունգարիայի (54% չհաջողված հարձակումներ), Ֆինլանդիայի (75%) կամ Ռումինիայի (100%) մեծ երկրների համար չհաջողված հարձակումների թիվը միջինից բարձր է: Հարձակումների և չհաջողված հարձակումների հարաբերակցության ամենացածր տոկոսները գրանցվել են Իռլանդիայում (6%), Հունաստանում (8%) և Իտալիայում (11%):

Ռիսկայնությունը տարբեր երկրներում նույնպես տարբեր է: Ամենաբարձր ռիսկերը գրանցվել են Իտալիայում (1/9), այնուհետև Չեխիայի Հանրապետությունում (1/14) և Հունաստանում (1/14): Այն ցածր է եղել Նորվեգիայում (1/411), Հունգարիայում (1/379) և Կիպրոսում (1/295), իսկ Էստոնիայում, Լիխտենշտեյնում և Լյուքսեմբուրգում որևէ բանկ, ըստ վիճակագրական տվյալների, հարձակման չի ենթարկվել:

Կորուստներ

2007 թ-ին կորուստների ընդհանուր թիվը կազմել է 99.489.703 եվրո (2006 թ. համեմատ այն նվազել է 1%-ով): Հաջողված հարձակումների հետևանքով հասցված միջին վնասը 2007 թ-ին կազմել է 21.114 եվրո (2006 թ. հետ համեմատ -4%):

Մի շարք երկրներում հարձակման դեպքեր, հետևաբար և վնասներ առհասարակ չեն գրանցվել: Որոշ երկրներում կորուստների ընդհանուր գումարը նվազել է, մասնավորապես՝ Կիպրոսում (-83%), Ֆինլանդիայում (-100%), Շվեյցարիայում (-70%), մյուսներում այդ ցուցանիշն աճել է, օրինակ՝ Սլովենիա (246%), Չեխիայի Հանրապետություն (+84%), Հունաստան (+77%):

Ինչպես 2006 թ-ին, այնպես էլ 2007 թ-ին կողոպուտների ժամանակ ամենահաճախ արձանագրված գումարը կազմում է 5.000-25.000 եվրո: Այդուհանդերձ, որոշ երկրներում մի քանի գողություններ հանգեցրել են խոշոր թալանի, ինչպես օրինակ Հունաստանում (6 գողություններ հասցրեցին 4.405.000 եվրո վնաս, որը կազմում է գողացված ընդհանուր գումարի մոտավորապես 44%-ը) և Լեհաստանում (կորուստների ընդհանուր ծավալի 60%-ը պատճառված էր 3 հանցագործությունների արդյունքում):

2007 թ-ին բանկոմատների վրա իրականացված հարձակումների արդյունքում հասցված վնասի ծավալը զգալիորեն նվազել է՝ 68.280.126-ից 15.678.710 եվրո, որը կազմում է մոտավորապես 77%:

Աղյուսակ 1. Ձերձարարությունների թիվը ըստ երկրների (2007 թ.)

Երկիր	գողությունների թիվը 2007 թ.	գողությունների թիվը 2006 թ.	ռիսկայնությունը 2007 թ.	ռիսկայնությունը 2006 թ.	2007 թ. գողությունների չհաջողված փորձեր	2007 թ. գողացված ընդհանուր գումարը (€)	2006 թ. գողացված ընդհանուր գումարը (€)	Մեկ հաջողված գողության միջին չափը (€) 2007 թ.	2006 թ. գողությունների հաջողված փորձերի հետևանքով միջին կորուստը (€)
Բելգիա	127	141	1/68	1/61	53	1.932.970	3.794.699	26.121	47.434
Կիպրոս	3	2	1/295	1/336	1	12.175	71.096	6.088	35.548
Չեխիայի Հանր.	115	77	1/14	1/21	17	1.177.637	641.057	12.017	11.053
Դանիա	71	69	1/29	1/29	8	1.007.666	1.409.454	15.955	21.905
Էստոնիա	0	1			0	0	4.470	n.a.	n.a.
Ֆինլանդիա	4	3	1/425	1/549	3	4.380	1.609.590	4.380	804.795
Ֆրանսիա	210	271	1/134	1/100	53	2.438.713	3.052.583	15.533	14.331
Գերմանիա	552	582	1/76	1/73	132	11.464.134	14.393.000	27.296	32.417
Հունաստան	286	220	1/14	1/18	24	10.164.666	5.744.252	38.796	29.307
Հունգարիա	9	12	1/379	1/270	5	41.508	102.017	10.377	17.002
Իսլանդիա	0	1	0	0	0	0	0	0	0
Իրլանդիա	17	44	1/65	1/25	1	203.652	310.545	12.728	8.626
Իտալիա	3.364	3.092	1/9,8	1/11,5	392	57.176.804	55.987.305	19.238	20.183
Լիտվիա	10	20	1/74	1/34	10	0	699.000	0	63.545
Մալթա	1	0	n.a.	0	0	1.244.186	0	1.244.186	0
Նորվեգիա	3	2	1/411	1/617	0	124.458	807	41.486	807
Լեհաստան	51	52	1/264	1/230	12	329.100	203.580	8.438	5.502
Պորտուգալիա	93	118	1/64	1/46	12	1.140.147	907.506	14.076	8.643
Սլովակիայի Հանր.	22	29	1/38	1/40	4	200.000	280.000	11.111	9.655

Սլոյեմիա	9	10	1/129	1/115	3	62.736	18.135	10.450	2.582
Իսպանիա	417	452	1/96	1/85	44	5.831.463	6.736.278	15.634	16.154
Շվեդիա	41	45	1/48	1/43	14	703.835	595.459	26.068	18.608
Շվեյցարիա	10	17	n.a.	n.a.	5	298.963	990.717	59.793	90.065
Նիդերլանդներ	29	41	1/108	1/78	16	1.344.087	1.026.455	84.005	60.380
Մեծ Բրիտանիա	106	119	1/100	1/100	32	2.586.423	2.330.718	34.952	32.827
Միջին	206	201	-	-	31	3.684.804	3.737.360	66.876	51.976
Ընդհանուր	5.550	5.420	1/74	1/74	797	99.489.703	100.908.723	-	-

Աղբյուրը՝ Եվրոպական Բանկային Ֆեդերացիա

Երկիր	գողությունների թիվը 2007 թ.	գողությունների թիվը 2006 թ.	ռիսկայնությունը 2007 թ.	ռիսկայնությունը 2006 թ.	2007 թ. գողությունների չհաջողված փորձեր	2007 թ. գողացված ընդհանուր գումարը (€)	2006 թ. գողացված ընդհանուր գումարը (€)	Մեկ հաջողված գողության միջին չափը (€) 2007 թ.	2006 թ. գողությունների հաջողված փորձերի հետևանքով միջին կորուստը (€)
Ավստրալիա	60	57	n.a.	1/82	24	553.029	315.227	15.362	9.851
Կանադա	769	809	1/8	1/7,5	38	1.585.161	2.435.527	2.168	3.011
Խորվաթիա	9	30	1/128	1/37	1	543.093	665.392	67.886	25.592
Նոր Զելանդիա	61	22	n.a.	1/90	6	102.884	83.019	1.871	3.774
Թուրքիա	67	104	1/144	1/66	38	381.092	368.461	13.141	4.848
Միջին	138	146	-	-	15	452.180	552.524	14.347	6.725
Ընդհանուր	966	1.022	1/24	1/92	107	3.165.259	3.867.671	-	-

Աղբյուրը՝ Եվրոպական Բանկային Ֆեդերացիա

n.a. (not available) - տեղեկատվությունը հասանելի չէ

Բանկային մասնաճյուղերը՝ որպես թիրախ

Էլեկտրոնային բանկային ծառայությունների զարգացման արդյունքում, որոնց նպատակը բանկային ծառայությունների բարելավումն է, կրճատվում է բանկերի մասնաճյուղերի քանակը: Այդուհանդերձ, այդ կրճատումը չնչին է (2006 թ. հետ համեմատ՝ -1%), իսկ մասնաճյուղերի ընդհանուր քանակը հասնում է 204712-ի:

Հաշվի առնելով հաճախորդների ցանկությունները (շուրջօրյա ծառայությունների մատակարարում) և գնային հարմարավետությունը՝ կանխիկ դրամը հիմնականում բաշխվում է բանկոմատների միջոցով: Այդ իսկ պատճառով էլ ավելի շատ բանկոմատներ են տեղադրվում բանկային հաստատություններից դուրս: Առևտրային կետերում և հասարակական վայրերում բանկոմատներ տեղադրելու միտումը շարունակվում է: Որոշ երկրներում բանկոմատների մեծ մասը տեղադրված է հանրախանութներում:

Բանկոմատների և այլ ավտոմատ սպասարկող սարքավորումների քանակն ու օգտագործումն ավելանում է: Այսպիսով, ավելի քան նախկինում, հաճախորդների համար նախատեսված կան հաճախորդներից ներգրավված միջոցները կենտրոնացված են (հատուկ վայրերում, որտեղ տեղադրված են տարբեր ավտոմատ սպասարկող սարքավորումներ):

Այնուհայտ է, որ հետագայում ուղղակի (պայթուցիկ նյութեր, գազ և այլն) և անուղղակի (աշխատողների ահաբեկչություն, բանկոմատները լիցքավորելու պահին հարձակումներ և այլն) հարձակումների թիվը կաճի: Բանկոմատները հիանալի թիրախ են հանդիսանում «պրոֆեսիոնալների» համար:

Գերմանիայում, ինչպես նաև Իսպանիայում և Չեխիայի Հանրապետությունում գրանցվել է բանկոմատների վրա ուղղակի հարձակումների թվի ամենբարձր ցուցանիշը: Իսկ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան արձանագրել են բանկոմատները սպասարկող աշխատողների հանդեպ գործածված ագրեսիայի բավականին լուրջ թվեր: Ինչ վերաբերում է ավտոմատ սպասարկող

սարքավորումների ցանցի վրա հարձակումներին, ապա դրանց թիվը մի փոքր նվազել է, մինչդեռ այդ սարքավորումներից հանված դրամի ծավալը 2006 թ. համեմատ աճել է 289%-ով:

Աղյուսակ 2. Բանկոմատներով գեղծարարությունները ըստ երկրների (2007թ.)

Երկիր	Հասցված վնաս (€)	Բանկոմատների ընդհանուր քանակ
Բելգիա	0	7.604
Կիպրոս	0	560
Չեխիայի Հանր.	1.193.344	3.277
Դանիա	n.a.	3.129
Էստոնիա	n.a.	1000
Ֆրանսիա	800.474	47.000
Գերմանիա		54.370
Հունաստան	n.a.	7.270
Հունգարիա	n.a.	4.286
Իտալիա	9.706.617	41.551
Լիխտենշտեյն	0	20
Լիտվիա	35000	1.332
Մալթա	0	166
Լեհաստան	n.a.	11.542
Պորտուգալիա	1.252.185	12.510
Սլովակիայի Հանր.	n.a.	2.009
Սլովենիա	0	1.639
Իսպանիա	132.150	19.984
Շվեդիա	n.a.	3.028
Նիդերլանդներ	125.000	8000
Սեօ Բրիտանիա	2.588.940	60.000
Միջին	1.045.247	12.095
Ընդհանուր	15.678.710	290.277

Աղբյուրը՝ Եվրոպական Բանկային Ֆեդերացիա

Երկիր	Հասցված վնաս (€)	Բանկոմատների ընդհանուր քանակ
Անդորրա	0	146
Խորվատիա	61.341	n.a.
Նոր Զելանդիա	n.a.	3
Միջին	20.447	50
Ընդհանուր	61.341	149

Աղբյուրը՝ Եվրոպական Բանկային Ֆեդերացիա

n.a. (not available)- տեղեկատվությունը հասանելի չէ

Հայաստանի բանկերի միություն